ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«04» Հոկտեմբերի 2024թ. No 7/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-24/11**

Մասնակից՝ **«Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 06938006, գործունեության հասցե՝ ք. Վանաձոր, Մաշտոցի փ. 8/1/

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար Երևան քաղաքի Սասունցի Դավթի թիվ 87Ա հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.10.2024թ. հայտարարվել է ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-24/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել «Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 18.10.2024թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը լրացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ առկա չէ պահանջվող լիցենզիայի ներդիրներից 08 ներդիրը:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիմումը, որով դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե լիցենզիայի ներդիրը ստանալու համար, սակայն չի ներկայացրել 08 ներդիրը, որի հիման վրա գնահատող հանձնաժողովի 22.10.2024թ. թիվ 3 որոշմամբ կազմակերպության կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին ոչ

համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Սերպանտին Ինժիներինգ» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11/4/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ